«ԶԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 135-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում կայացավ «Զահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական 6-րդ նստաշրջանը՝ նվիրված Հր. Աճառյանի ծննդյան 135-ամյակին: Գիտական նստաշրջանն ընթացավ երեք օր՝ 2011 թ. ապրիլի 27-ից 29-ը՝ ընդգրկելով 31 զեկուցում: Զեկուցումներ կարդացին ինստիտուտի գիտաշխատակիցները, հանրապետության բուհերի, Արցախի համալսարանի ներկայացուցիչները:

Առաջին զեկուցումները վերարժևորեցին աճառյանական ուսումնասիրությունները թեմատիկ բաժանումով: Լեզվի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանը *ներկայացրեց «Իրանական փոխառությունների քննությունը Հր. Աճառյանի աշխատություններում» զեկուցումը: Աճառյանի ստուգաբանած իրանական փոխառությունների ամբողջական հղումով («Հայոց լեզվի պատմություն», «Արմատական բառարան», «Լիակատար քերականություն հայոց լեզվի»)՝ նա ամփոփեց դրանց արժեքը՝ նախորդած և հաջորդած ուսումնասիրությունների համեմատությամբ: Ըստ այդմ՝ հստակեցրեց իրանական համարված փոխառությունների համոզիչ կամ առարկելի բնույթը, դրանց հետաճառյանական հավելումները, ապա իրանագիտության արդի տվյալների հիմքով նշեց փոխառությունների ներլեզվական աղբյուրները: Հայերենը և իրանական լեզուները քննելով փոխադարձ առնչությամբ՝ Լ. Հովհաննիսյանը անդրադարձավ նաև հայերենից արված փոխառություններին և հարակից այլ հարցերի: Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ* Արտեմ Սարգսյանը *ի մի բերեց Հր. Աճառյանի բարբառագիտական հայացքները համանուն զեկուցման մեջ: Նա Աճառյանի բարբառագիտական ուսումնասիրությունները գնահատեց մի քանի տեսանկյունից. նախ ներկայացրեց դրանց դերը բարբառագիտության զարգացման համատեքստում, ձևաբանական միահատկանիշ դասակարգման կարևորությունն ու այդ մեթոդի կայուն կիրառելիությունը, ապա անդրադառնալով բառարանային բացառիկ նմուշ «Հայերենի գավառական բառարանի» նշանակությանը՝ ամփոփեց նաև մեծանուն հայագետի ավանդը բառարանագրության ասպարեզում: «Հրաչյա Աճառյանի պատմահամեմատական ուսումնասիրությունները» զեկուցումով բ. գ. թ.* Մելադա Աղաբեկյանը *ամբողջացրեց այդ ուղղության հիմնական արդյունքները՝ ներկայացնելով Աճառյանի ինչպես ներլեզվական ուսումնասիրությունները հնչյունական, քերականական միավորների ծագման վերաբերյալ, այնպես էլ՝ միջլեզվական տեսանկյունը հայերենի և այլ լեզուների զուգաբանությունների, լեզուների մերձավորության, նոստրատիկ ցեղակցության և այլ հարցերի առնչությամբ: Բ. գ. դ., պրոֆեսոր* Խաչիկ Բադիկյանը

«Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությանը նվիրված զեկուցմամբ ցույց տվեց, թե համեմատական տվյալների հսկայական քաղվածքը հայերենի ուսումնասիրության ինչպիսի խորություն է ապահովել: Գիտական նստաշրջանը շարունակվեց բ.գ.թ., դոցենտ Ջեմմա Բառնասյանի *«Փոխադարձ դերանունները հայերենի բարբառներում», բ. գ. թ., դոցենտ* Սարգիս Ավետյանի *«Գրաբարի ւ/ու հերթագայության ծագումնաբանական և տիպաբանական քննություն» և* Շուշան Ասիլբեկյանի *«Գոյական շարույթի ձևային նկարագրություն UNL միջավայրում» զեկուցումներով:*

Գիտական նստաշրջանի երկրորդ օրը՝ ապրիլի 28-ին, թեմատիկ տարբեր հայեցակետերից անդրադարձ արվեցին հայերենի ինչպես ժամանակակից իրողությունների, լեզվառճական առանձնահատկությունների, այնպես էլ պատմական, բարբառային երևույթների: Տերմինների դասակարգման և քննության վերաբերյալ զեկուցումներ ներկայացրին բ. գ. թ., դոցենտ Անահիտ Գալստյանը՝ *«Լեզվաբանական տերմինների ուսումնասիրության մի քանի հարցեր» և բ. գ. թ.* Հասմիկ Թադևոսյանը՝ *«Նորակազմ ախտաբանական տերմիններ Ասար Սեբաստացու Բժշկարանում»: Հեղինակային ոճերին էին նվիրված բ. գ. թ., դոցենտ* Աշոտ Գալստյանի *«Միլվա Կապուտիկյանի «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» ուղեգրության լեզվառճական դրսևորումները» և* Անահիտ Էմին-Տերյանի *«Օշին Էլակէօզի լեզվամտածողության մի քանի առանձնահատկություններ» զեկուցումները: Ժամանակակից հայերենի քերականական մի շարք երևույթներ տեսական և կիրառական վերլուծությամբ ամփոփեցին բ. գ. թ.* Հովհաննես Զաքարյանը՝ *«Շարադասական դիրքերը և դրանց արժեքները հայերենում», բ. գ. թ.* Ամալյա Բարսեղյանը՝ *«Խնդրառական կապակցությունների ոչ կանոնական դրսևորումները ՁԼՄ-ների լեզվում…» և* Ռուզաննա Դոխոյանը *«Արդի հայերենի ասացական բայերի կատարողական (պերֆորմատիվ) գործածությունը» զեկուցումներով: Բարբառների քերականական նկարագրությանը, բառապաշարի ուսումնասիրությանը, ժամանակագրական առանձնահատկություններին, քերականական որևէ ձևի կամ բառի բարբառային տարբերակների համեմատական քննությանը նվիրված զեկուցումներ ներկայացրին բ. գ. թ., դոցենտ* Գայանե Գևորգյանը՝ *«Եղանականիշ մասնիկով ժամանակաձևերի ժխտական խոնարհումը բարբառներում», բ.գ.թ., դոցենտ* Արմեն Սարգսյանը՝ *«Ղարաբաղի բարբառի բառապաշարի արտացոլումը բարբառային բառարաններում», բ. գ. թ., դոցենտ* Հասմիկ Խաչատրյանը՝ «Տանիք *հասկացության բառադրսևորումների բարբառային բնութագիրը», բ. գ. թ.* Վալենտին Խաչատրյանը՝ *«Բարբառային երևույթներ 1620–1640 թթ. ձեռագիր հիշատակարաններում» և* Հայկանուշ Հովհաննիսյանը՝ *«Բարբառը Շապուհ Բագրատունու Պատմության մեջ»:*

Գիտական նստաշրջանի վերջին օրը՝ ապրիլի 29-ին, թեմատիկ նշված ուղղություններին մեկտեղ անդրադարձ եղավ նաև ստուգաբանական հարցերի: Բառաքննական և զեկուցումներ ներկայացրին բ. գ. թ. Նազիկ Հովհաննիսյանը՝ *«Բառարաններում չվկայված մի քանի բառի քննություն», բ. գ. թ., դոցենտ* Նեկտար Սիմոնյանը՝ *«Ստուգաբանական դիտարկումներ»,*

համահեղինակներ՝ բ. գ. դ., պրոֆեսոր Լիանա Հովսեփյանը, *բ. գ. թ.* Օֆելյա Խաչատրյանը՝ *«Գրիգոր Նարեկացու «Տաղեր և գանձեր»-ի բառապաշարի բառակազմական վերլուծություն» և բ. գ. թ.* Գայանե Մխիթարյանը՝ *«Երաժշտական անվանումները V–VIII դդ. հայ պատմիչների երկերում»: Ժամանակակից հայերենի խոսքային իրացումները տարբեր տեսանկյուններից քննեցին բ. գ. թ., դոցենտ* Նվեր Սարգսյանը՝ *«Առօրյա խոսքի ժանրային տարբերակումների խնդիրը», բ. գ. թ.* Լուսինե Ղամոյանը՝ *«Խոսքի իրադրային արտահայտությունները» և բ. գ. թ.* Լիանա Սանթրյանը՝ *«Գովազդային տեքստերի լեզվական առանձնահատկությունները» զեկուցումներում: Հեղինակային ոճի առանձնահատկությունների վերաբերյալ զեկուցում ներկայացրեց* Ինգա Մարգարյանը՝ *«Հնաբանությունների լեզվառճական արժեքը Մերո Խանզադյանի արձակում»:*

Բ. գ. թ., դոցենտ Սուսաննա Տիոյանը *հանդես եկավ համակարգչային տերմինների հայերեն համարժեքներին նվիրված «Համակարգչային առկա բառապաշարը» զեկուցմով: Նախորդ դարասկզբի լեզվաբանական որոշ ըմբռնումներ ամփոփեց բ. գ. թ.* Տիգրան Սիրունյանը *«Լեզվաբնտանիքների հեռավոր ցեղակցության հարցը Գ. Մեննիշյանի «Արդի լեզվագիտությունը» աշխատության մեջ» զեկուցմամբ: Բարբառագիտական մի շարք իրողություններ էին ի մի բերված բ. գ. թ.* Ժաննա Միքայելյանի *«Բայի երկրորդական ժամանակները Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքներում» և համահեղինակներ՝ բ. գ. թ., դոցենտ* Լիլիթ Տեր-Գրիգորյանի *ու* Անահիտ Մկրտումյանի *«Դարձվածային հոմանիշները պարսկահայ խոսվածքներում» զեկուցումներում:*

Գիտական նստաշրջանի ավարտին ամփոփիչ ելույթներում նշվեց, որ զեկուցումներում ժամանակային լայն ընդգրկումով քննվել են լեզվի թե՛ պատմական և թե՛ արդի կարևորության հարցեր, և ըստ այդմ՝ կատարվել էական եզրահանգումներ:

ՏԻԳՐԱՆ ՍԻՐՈՒՆՅԱՆ